

Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2021-2022 ուստարի)

9-րդ դասարան

(տևողությունը՝ 120 րոպե)

ա) Հայոց պատմություն (15 միավոր)

1. Ե՞րբ է տեղի ունեցել Հռանդեայի ճակատամարտը. 0,5 մ.
 ա) 52 թ. բ) 58 թ.
 գ) 54 թ. դ) 62 թ.
2. Ո՞ր արքայի օրոք է Հայոց բանակի մարտիկների թիվը կազմել 300 հազար. 0,5 մ.
 ա) Արտաշես I բ) Տիգրան II
 գ) Գագիկ I դ) Տրդատ III
3. Որտե՞ղ է գտնվել Ոսխա (Օսխա) գյուղը. 0,5 մ.
 ա) Տարոն գավառում բ) Բագրևանդ գավառում
 գ) Բասեն գավառում դ) Կոգովիտ գավառում
4. Ո՞վ է հիմնել Նոր Ջուղայի հայկական տպարանը. 0,5 մ.
 ա) Մատթեոս Ջուղայեցի բ) Խաչատուր Կեսարացի
 գ) Խաչատուր Կեչառեցի դ) Ոսկան Երևանցի
5. Ո՞ր թվականից է Սիսը դարձել Ամենայն հայոց կաթողիկոսության նստավայր. 0,5 մ.
 ա) 1198 թ. բ) 1173 թ.
 գ) 1441 թ. դ) 1292 թ.
6. Քանի՞ տարի էր դասընթացի տևողությունը բարձրագույն դպրոցում (վարդապետարան). 0,5 մ.
 ա) 3-4 բ) 7-8
 գ) 10-12 դ) 4-5
7. Ո՞ր կազմակերպությունն էր տպագրում «Ազատության ավետաբեր» թերթը. 0,5 մ.
 ա) «Բարենպատակ ընկերություն» բ) «Հայրենիքի սիրո գրասենյակ»
 գ) «Պաշտպան հայրենյաց» դ) «Հայրենասերների միություն»
8. Ե՞րբ են ռուսական զորքերը գրավել Էրզրումը. 0,5 մ.
 ա) 1915 թ. դեկտեմբեր բ) 1916 թ. փետրվար
 գ) 1916 թ. ապրիլ դ) 1916 թ. դեկտեմբեր
9. Ե՞րբ է հռչակվել «Ինքնավար Սյունիքը»: 0,5 մ.
10. Ո՞րն է հայկական ազգային կինեմատոգրաֆիայի առաջնեկը: 0,5 մ.
11. Ո՞վ էր «Հայրենիքի փրկության կոմիտեի» նախագահը: 0,5 մ.
12. Ո՞ր թվականին է զորավար Անդրանիկ Օզանյանը մեկընդմիշտ հեռացել Հայաստանից: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
 ա) Չավնդուրի ճակատամարտը
 բ) Դավիթ բեկի գլխավորած զինուժի հաղթանակը ջևանշիր քոչվոր ցեղի դեմ
 գ) Անգեղակոթի գաղտնի ժողովի գումարումը
 դ) Մելիք Բաղրին պատկանող՝ Տաթևի մոտ գտնվող ամրոցի գրավումը
 ե) Հակոբ Ջուղայեցու գլխավորությամբ Էջմիածնի գաղտնի ժողովի գումարումը
 զ) Հայկական ուժերի հաղթանակը Հալիձորի ճակատամարտում
 է) Իսրայել Օրու կազմած՝ Հայաստանի ազատագրության ծրագրի ներկայացումը Պետրոս I-ին

1	2	3	4	5	6	7

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր.

1,5 մ. (6 X 0,25 մ.)

- 1. Տրդատ I
- 2. Դարեհ I
- 3. Սարգսի I
- 4. Նաբուգոդոնոսոր
- 5. Ռուսա II
- 6. Արգիշտի I

- ա. Տուշպա
- բ. Էկբատան
- գ. Բաբելոնի աշտարակ
- դ. Թեյշեբահինի
- ե. Գառնիի տաճար
- զ. Պերսեպոլիս
- զ. Նինվե
- է. Էրեբունի

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները:

1,5 մ. (3 X 0,5 մ.)

- ա) Սոհեմնո Տիգրանից հետո Հայաստանի թագավոր է դարձել Վաղարշ I Արշակունին, որից հետո Արշակունիների գահակալությունը Հայաստանում ժառանգական է դարձել:
- բ) Ք.ա. 183-179 թթ. Փոքր Ասիայում ընթացած պատերազմի դադարեցման արդյունքում կնքված հաշտության պայմանագրով Արտաշես I-ին հաջողվել է Փոքր Հայքի տարածքն ընդլայնել Պոնտոսի հաշվին:
- գ) Ըստ Կ.Պոլսում ռուսական դեսպանության ներկայացուցիչ Ա. Մանդելշտամի ծրագրի՝ հայկական վեց վիլայեթներից կազմվելու էր երկու նահանգ, իսկ նահանգապետեր նշանակվելու էր թուրքահպատակ քրիստոնյա կամ եվրոպացի:
- դ) Հայ բժիշկ Մ. Առուստամովը Աստրախանում խոլերայի համաճարակի ժամանակ անգնահատելի օգնություն է ցուցաբերել հիվանդներին ու փրկել հազարավոր մարդկանց կյանքեր:
- ե) Մխիթարյան միաբանության անդամ Ղ. Ինճիճյանը հրատարակել է պատմաաշխարհագրական բազմաթիվ աշխատություններ:
- զ) Հայաստանում առաջին հնգամյակի տարիներին կառուցվել ու շահագործման են հանձնվել 28, իսկ երկրորդ հնգամյակի տարիներին՝ 44 մեծ ու փոքր արդյունաբերական ձեռնարկություններ:
- է) Հայաստանում շուրջ 5-ամյա գործունեության ընթացքում Ալ. Մյասնիկյանին հաջողվել է համախմբել հասարակությանը և լուծել երկրի առաջ ծառայած խնդիրները:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները:

1 մ. (2 X 0,5 մ.)

- ա) Մեգոլիթի վերջին շրջանում ձևավորվել է արտաքնապես ժամանակակից մարդուն նմանվող, զարգացած ուղեղ ունեցող և խոսելու կարողություն ձեռք բերած մարդը, որին գիտնականներն անվանում են բանական մարդ:
- բ) Ըստ «Ձորանամակի», որը Արտաշիսյան ու Արշակունյաց թագավորությունների ժամանակաշրջանի հայոց զինուժի դասակարգման վերաբերյալ հրովարտակ էր, հայկական բանակն ուներ շուրջ 120 հազար զինվոր:
- գ) Անդրկովկասյան հատուկ կոմիտեն (ԱՀԿ, Օգակոմ) Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո 1918 թ. մարտի 9-ին Թիֆլիսում ստեղծված Անդրկովկասը կառավարող երկրամասային գործադիր և օրենսդիր մարմինն էր:
- դ) Կիլիկյան Հայաստանում ռազմական հմտություններից՝ ձիավարությունից, զենքի գործածությունից, քննությունը բարեհաջող հանձնած ազնվականները ստանում էին ձիավորի (ասպետ) աստիճան:
- ե) Վրացական արքունիքում մանկահասակ թագաժառանգի խնամակալը, նրա դաստիարակությանը զբաղվող և թագավորի բացակայության դեպքում երկիրը կառավարող պաշտոնյան կոչվում էր ամիրսպասալար:
- զ) Հայաստանի ազատագրության՝ Հ. Արդուբյանի և Հ. Լազարյանի կազմած ծրագիրը, որը հայտնի է «Հարավային ծրագիր» անունով, բաղկացած էր 18 հոդվածից:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
- ա) Ք.ա. 87 թ. Ասորիքի մայրաքաղաք Անտիոքում Տիգրան Մեծը բազմել է Սելևկյանների գահին և այնտեղ խաղաղությամբ իշխել շուրջ երեք տասնամյակ (27 տարի):
- բ) Հայ նշանավոր գիտնական, մտածող ու ճանաչված հռետոր էր Տիրանը (Հայկազն), որին Լուկոլլոսը գերեզմարել ու տարել է Հռոմ:
- գ) Սենեքերիմ Արծրունու գահակալության շրջանում (XI դարասկիզբ) Վասպուրականի թագավորությունն ուներ շուրջ 1 մլն բնակիչ, 8 քաղաք, 72 ամրոց ու բերդ, հարյուրից ավելի վանք ու հազարավոր գյուղեր:
- դ) 484 թ. աշնանը Հայաստան է եկել պարսից պաշտոնյա Նիխորը, և Հեր գավառի Նվարսակ գյուղում կնքվել է հայ-պարսկական պայմանագիր:
- ե) 571 թ. Հայաստանը երկրորդ անգամ բաժանվել է Հռոմեական կայսրության և Պարսկաստանի միջև:
- զ) 855 թ. գարնանը զորապետ Բուղան ներխուժել է Սյունիք, ասպատակել Արևելյան Վրաստանը, ապա ջախջախիչ պարտություններ է կրել Արցախում՝ այդպես էլ չկարողանալով գրավել Գտիչ (Քթիշ) ամրոցը:
- է) 1836 թ. մարտի 11-ին Նիկոլայ Առաջին կայսեր հրամանագրով վավերացված «Պոլոժենիեն» օրենքի ուժ ուներ և կարգավորում էր ցարական կառավարության ու Հայոց եկեղեցու փոխհարաբերությունները:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)
- 1794 թ. Հնդկաստանի Մադրաս քաղաքում Մովսես Բաղրամյանի ջանքերով լույս է ընծայվում հայկական առաջին պարբերականը՝ «Ազդարարը», որն ուներ քաղաքական, տնտեսական և լուրերի բաժիններ:

Ուղղում – Ոչ թե՛ _____, այլ _____ :

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
- «Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը ազատ և անկախ պետություն, ինչպես դա արդեն արել են Դաշնակից տերությունները»:*
- ա. Ո՞ր փաստաթղթից է մեջբերված հատվածը:
- բ. Ե՞րբ է այն ստորագրվել:
- գ. Ըստ այդ փաստաթղթի՝ Հայաստանը և Թուրքիան, ինչպես և Բարձր պայմանավորվող կողմերը, ո՞ր վիճակներում Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանազատումը համաձայնեցին թողնելու ԱՄՆ-ի որոշմանը:

բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)

1. Ո՞ւմ խոսքերն են մեջբերված. «Լավագույն օրենքները նրանք են, որոնք դուք կարող եք ընդունել, իրագործել և ապրել բարեկեցիկ կյանքով»: 0,5 մ.
- ա) Կլիսթենես բ) Սոլոն
- գ) Պերիկլես դ) Պիսիստրատ
2. Ո՞վ է եկեղեցական ժողովի որոշմամբ դատապարտվել որպես հերետիկոս և 1415 թ. խարույկ բարձրացվելով՝ մահապատժի ենթարկվել. 0,5 մ.
- ա) Ջոն Ուիկլիֆ բ) Ջորդանո Բրունո
- գ) Ժաննա դ'Արկ դ) Յան Հուս

3. Ե՞րբ է տեղի ունեցել Լայպցիգի ճակատամարտը. 0,5 մ.
 ա) 1805 թ. հոկտեմբեր բ) 1812 թ. օգոստոս
 գ) 1813 թ. հոկտեմբեր դ) 1815 թ. հունիս
4. Ո՞վ է գլխավորել ժողովրդական ճակատի կառավարությունը Ֆրանսիայում 1936 թ. 0,5 մ.
 ա) Ժորժ Կլեմանսո բ) Շառլ դը Գոլ
 գ) Լեոն Բլյում դ) Էդուարդ Դալադիե

5. Ի՞նչ անունով է հայտնի Համաշխարհային տնտեսական մեծ ճգնաժամը հաղթահարելուն միտված Ֆ. Դ. Ռուզվելտի մշակած համալիր ծրագիրը: 0,5 մ.

6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)

- | | |
|---|---|
| 1. Դանթե Ալիգիերի
2. Թոմաս Մոր
3. Նիկողայոս Կոպեռնիկոս
4. Էրազմ Ռոտերդամցի | ա. «Երկնային ոլորտների շրջապտույտի մասին»
բ. «Աստվածային կատակերգություն»
գ. «Գոլք հիմարության»
դ. «Ուտոպիա» |
|---|---|

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

- ա) Մայնի Ֆրանկֆուրտում գոմարված Ազգային ժողովի նստաշրջանն ընդունել է Գերմանիայի սահմանադրությունը, որով նախատեսվում էր երկրի միավորում և Գերմանական տերության ստեղծում:
- բ) Ֆրանսիայում ստեղծված Երկրորդ կայսրությունը գոյություն է ունեցել 1830-1871 թթ.:
- գ) Ափիոնի ներմուծման վրա չինական իշխանությունների դրած արգելքը հանգեցրել է Ափիոնի երկրորդ պատերազմին, որն ընթացավ 1840-1842 թթ. և ավարտվել Չինաստանի պարտությամբ:
- դ) Ստրկատիրության և այլ խնդիրների շուրջ ԱՄՆ-ի հարավային և հյուսիսային նահանգների միջև բռնկվել է քաղաքացիական պատերազմ, որն ընթացել է 1861-1865 թթ.:
- ե) Նոր տնտեսական քաղաքականությունը (նէպ) ԽՍՀՄ-ում սկսվել է կիրառվել 1922 թ. գարնանից, որի արդյունքում 1925 թ. ԽՍՀՄ-ում արտադրանքի ծավալները հասել են 1913 թ. մակարդակին:
- զ) 1944 թ. հունիսի 6-ին անգլո-ամերիկյան զինուժն անցել է Լա Մանշ նեղուցը և ափ իջել Ֆրանսիայի հյուսիսում. այդպիսով Եվրոպայում բացվել է երկրորդ ճակատը:

1	2	3

Հանրապետական օլիմպիադայի
 հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
 պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

07.02.2022 թ.